



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 օգոստոսի 2019 թվականի թիվ 106-Ա

ԻՆԳԱ ԿԱՐԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ  
ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի՝ «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» թիվ 878-Ն որոշումը՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. 2019 թվականի օգոստոսի 1-ից Ինգա Կարենի Հարությունյանին ՀՀ Տավուշի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնում փորձագետ ներգրավել հինգ ամիս ժամկետով:

2. «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին համապատասխան սահմանել դրույթաչափ՝ գլխավոր պաշտոնների 2-րդ ենթախմբի սանդղակի և աշխատավարձի 1-ին մակարդակի գործակցի /3.88/ կիրառմամբ՝ 256623 /երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր քսաներեք/ դրամ:

ՄԱՐԶՊԵՏ՝

Հ.ԶՈՒԲԱՆՅԱՆ

X

2019թ. օգոստոսի 1  
ք.Իջևան